

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
№ 5
Տ Ա Ր Ե Կ Ա Ն
Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ն Է
Թաւրիզում 14 զուն
Գաւառներում 20 զուն
Ա Ր Տ Ա Ս Ա Ն Մ Ա Ն
Ռուսաստան 4 րբ. 50 կ.
Թուրքիա 50 զուն
Եւրոպա 12 ֆրանկ
Ամերիկա 2 տոլար 5 ս.
Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողաւոր 10 շահի
Զորքերը 5
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի
Նմանաբան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏԻՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal Armén. «MITK»

ՄԻՏԻՔ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԲԱՆ
اداره روزنامه ميٹك

- ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
1. Մեզ գրողները խորհում են գրին պարզ, մաքուր և անպայման սրբի սաւաղին երեսի վրայ:
 2. Նմանաբան իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
 3. Մենք մերժում ենք լուր և լուր և ուղղագրական ներշնչութեամբ և մեզ ենք վերապահում իրաւունք՝ անպատճառ չիզոյթներ տալ մեր ընդունած յօդագրութեանը — ուսկի:
 4. Չստացուած յօդուածները չեն վերադարձնուած: Ուղղակի և չստացուած երկար նիւթերը յետ ստացուած համար պէտք է ուղարկել պատշաճ ժամանակ:
 5. Չի ստացւի ոչ մի յօդուած եթէ զաւելիք անուշահամ միտքամանակ չի կրի յօդուածագրի անունը ազգանունը:
 6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դեպքում խրատ խաղաղութիւնը չեն կրնալ և համարում պատասխանատու թիւնքից:
 7. Չստացուած յօդուածների համար խմբագրութիւնը բացատրութիւններ չի տալիս:
 8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 զուն 16 շահի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՄԱԳԱՋԻՆ ԲՕՆ ՄԱՐՇԷ
ԱՒԱԳ ԽԱՆ ԱՅԹԱՆԴԻԼԵԱՆԻ
Հիմնաւած 1897 թ.
Մագաղինը ընդարձակելով ամեն շարաթ ստացւում են Եւրոպայից և Ռուսաստանից ամեն տեսակ ապրանքներ, բոլորովին թաւրմ և աժան արժէքներով:
Թարմ շոկոլատ, կակաօ, սուրճ, բազմատեսակ կօնֆէտներ, մուրաբաներ և կոմպոտներ: Ռուսական և Անգլիական պէչէնիներ. բազմատեսակ քօնսերվներ, սարդին, թոն, արկիւնների մէջ խոզի միս, կալպաններ, հոլանդական պանիրներ, և այլն են. են:
Կօնեակ, ուսմ, զանազան գինիներ, շամպանիա, լէբօններ, անգլիական օղիներ, citronade orangeade framboisade և grenade, թարմ, իսկական ձիթաւոր: Ռուսական, Տաճկական և եգիպտական պատիւրոսներ. սիգարներ — Cora.
Ընտիր ճաշակաւոր ձեռնափայտեր:
Կանացի և տղամարդկանց ճաշակաւոր կոստիւմացուներ:
Մեր մշտական յաճախորդներին տրւում է 5% զեղչ:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր
Թէհրան փետր. 13/26
Նազարբէկեան պատճէնը կենտրոնական Հայկական դպրոցների տեսուչներին և Նարազադ ամսագրին Թաւրիզում:
Արամեան դպրոցի նախկին սաները տօնելով պարսկահայ կրթութեան պիւնը մէկի 60-ամեակը բողոքում են նոյն դպրոցի մանկավարժական ներկայ կազմի դէմ. օգտուելով յորեկանական տօնախմբութիւնից կողմ են անում թաւրիզահայ հասարակութեան փրկել Արամեան դպրոցը ներկայ անկեալ, խղճուկ վիճակից: Կազմուած երեկոյթի արդիւնքը կ'յատկացուի ֆօնդին ներկայ ուսուցչական խմբի փոխուելուց յետոյ:
Թէհրանի Յորեկանական Յանձնախումբ:
«Ղարաղաղ»
*) Աոյն հեռագրի ստացումից մի օր յետոյ և սոյն հեռագրի պատճառով գումարուեց Յորեկանական յանձնաժողովի նիստը, ուր արտայայտուեցաւ ընդհ. զայրոյթ հեռագրի բովանդակութեան և հեղինակների դէմ: Առանձնապէս վրդովեցուցիչ համարուեց այն հանգամանքը, որ հեռագրողները անվստահութիւն յայտնելով դէպի յիշեալ հեռագիր «ստացողները» տուել էին պատճէններ որոշ անձանց: Մենք խնդրեցինք, որ յիշեալ հեռագիրը տան մեզ տպելու «Մտքի» մէջ՝ նորան յարմար պատասխանով: Ժողովում յայտնեցին սպասել, մինչև որ իրենք կ'սպասեն այդ վերաւորական հեռագրի հարցը, կիմանան հեղինակները և կ'տան իրենց պատասխանը: Այլ առթիւ կ'տանք մանրամասնութիւններ յորեկանական յանձնաժողովի արածների մասին: Խմբ.

ԱՆԱՆՈՒՆԵՐԸ ԵՒ ԱՐՋԱՄԱՐՆ-ՈՒՄՆԵՐԸ
Ո՛վ քաջք է հայոց, որք զանձինս արգելեալ փակեցէք ընդ Տիգրանակերտի պարսպովը և արտաքս ձայն արկանէք սպառնալից, զի քաջ արանց է յարձակ դաւաճի եւ յազատ տեղաց կոռուի եւ կանանց գործ է արգելալ փակել զինքնանս յերկիւղէ առ հանդերձեալ կրօնսն: Մ. Նուրեմացի
Սրանք՝ Յունաց պատերազմից յաղթութեամբ դարձող Շապուհի խօսքերն են, ուղղուած Տիգրանակերտացի, որոնք պարսկացիների յետեւում ամրացած՝ ծաղրում էին Սասանեան արքայից արքային: Եւ իրաւամբ Շապուհը նոցա գործը կանացի է համարում: Զի կրօնողը քաջարանց պէս բաց դաշտ դուրս կգայ, բաց ճակատ կըկանգնի թշնամու հանդէպ՝ վէրք տալու և ստանալու:
Նոյն խօսքերը մենք համարձակօրէն ուղղում ենք նրանց, որոնք կանացիարար արգելի փակել են իրենց ուրիշների անուանները ներքոյ և այդ թագստեան տեղից բուժ նետել են ուղղել Արամեան դպրոցի մանկավարժական ժողովի հասցէին, որ պատիւ ունի չպատկանելու «գրեհասիրովան» նայեա պուրկիկայի» խեղճողորմ դասին:
Եւ այդ կանացիակերպ նետաձիգները կոռուի նշան տուել են Թէհրանից ու ամաշել են երեսն գալ իրենց իսկական անուամբ:
Թէհրանում եղող ... սաները այդ հեռագրով մի բան են միայն ապացուցել, որ Արամեան դպրոցը չի կարողացել յղկել տաշել, այդ հեռագրի հեղինակների ասիականութիւնը: Եւ այդ հասկանալի պատճառով, յորեկանական այդ մեծահանդէս օրում, չկարողանալով տիւրել իրենց կրքերին, նոքա հանդէս էին եկել մի շնորհաւորութեամբ, որ ոչ մի ինտելիգենտ և ջէնտլմէն մարդու յատուկ չէ:
Եւ ահա այդ անտաշութիւնը

պախարակեց և յորեկանական յանձնաժողովը, որ միաբերան այդ հեռագիրը համարեց «անկօրեկտ», իսկ ուրիշները արտայայտուեցին, և այն էլ իրաւամբ, շատ աւելի ծանրը և ընդունալ խօսքերով:
Յորեկանական յանձնախումբը՝ Մարաղա, Ուրմի, Էնզելի, Ռէշտ, Թէհրան, Բազու, Թիֆլիս, Աստրախան, Մոսկկա և այլ քաղաքներում իր կողմից նշանակել է տեղական մասնախմբեր, բաղկացած յիշեալ քաղաքների աշքի ընկնող հասարակական գործիչներից:
Թէհրանի մասնախմբի անդամներն են՝ Է. Բ. Կանապետ պ. Սէթ Ներսիսեան, պ. Ա. Թունեան պ. Ս. Թումանեան և այլք: Բնականաբար նոքա այսպիսի հեռագիր չէին տայ: Թաւրիզի յանձնախումբը մի հեռագրով դիմեց Թէհրան յիշեալներին՝ ստուգելու թէ՛ իվեր են այդ հեռագրի հեղինակները, որպէս զի հեռագրուէր նոցա, որ Թաւրիզի յորեկանական յանձնախումբը մեծում է ստանալ այդ փողը: Վերջին օրը նախքան յորեկանը, Թէհրանից պատասխան եկաւ՝ որ իրենք այդ հեռագրից լուր չունեն,
Այն անձինք, որ ստացել են այդ հեռագրի պատճէնները, արդէն ոչ մի կասկած չեն թողնում թէ՛ ինչ դաւանանքի մարդիկ կ'լինեն և Թէհրանի անանուն գործիչները կամ կեղծիչները:
Այն ու ամենայնիւ, որովհետեւ պաշտօնապէս դեռ հեռագրի հեղինակները մնում էին ու մնացին անանուն, ուստի և յորեկանական յանձնախմբի կողմից էլ այդ անանունները արհամարհուեցան, զի նոցա հեռագիրը արժանի չհամարուեցաւ կարգացուելու և յիշուելու շնորհաւորական հեռագիրների շարքում:
Այդ արհամարհանքից բացի, տիւրը հերոսները անգամ պատասխանի արժանի չհամարուեցան: Դեռ մենք առիթ կունենանք ասպարէզ քաշելու այն դպրոցները, որոնց ղեկավարները ստացել են պատճէններ հեռագրի և որոնք իրենց հասած ամօթը փարատելու համար աշխատում էին գերազան-

ձգտումները: Ինչպէս կարելի է երա-
խալում բնածին լինին լաւ կամ վատ
հակումները, երբ երեխան աշխարհ
բաշտում էրբէք իւր հետ չի բերում լաւ
կամ վատ յատկութիւններ: Հէնց ա-
ռաջին օրից նրան դաստիարակել է
մայրը, առաջին ազդեցութիւնը ստա-
նում է (մօրից): Ինչպէս զեկաւարը
ամեն ուղղութեամբ կարող է տանել
նաւակը, այնպէս էլ մայրը, որ երե-
խայի հէնց առաջին օրից դաստիա-
րակել է ու կրթիչն է, կարող է ինչ ուղ-
ղութեամբ էլ ուղի կրթել երեխային:
Մանկան դաստիարակութեան պա-
տասխանատու գործը ծանրանում է
կնոջ վերայ: Կինն է որ իւր բնական
քնքովութեամբ մայրական հոգացո-
ղութեամբ պիտի կրթի իւր զաւակին,
զարգացնելով նրա մէջ լաւ հակումներ,
բարի ձգտումներ:

(Շար) Թ. Գորոյեան

Դու անցնում էիր... ու հանդիպեցիր
Գայթաբաբ արտիստականներին,
Կանգ առիր այնտեղ շուրջը նայեցիր՝
Շքեղ անցեալի պատկերն յիշեցիր:
Թափառած քարեր, եւ գու աւանում այնտեղ,
Ու մի ժամանակ պալատ էր շքեղ.
Պարտիզում ահա բուսել են փշեր,
Բայց մի ժամանակ հղի են վարդեր:
Ինչ ու ազուան են նստած վայ կանչում,
Ու մի ժամանակ սոխակն էր երգում.
Այնտեղ կոյն էր պարում ու խընդում,
Իսկ աժմա, նայիր, ծծերն են վխտում:
Ծանր ու խորը հոգեց քաշեցիր,
Նորա անցեալը շատ փառսեցիր.
Մի բողբ մնացիր դու անշարժ կանգնած՝
Տեսող, մօտեցար մի պատի կամայ,
Եւ պատի վերայ այդ կիսականգուն
Փորեցիր չքնաղ կոյս իմ քո անունը—

Տիգր. Պողոսեան

Բանային Միմուզներ.

I.
Տառապանք անհատում, անպատում,
Եւ կարօտ ու յոգիւր խնթախանչ,
Երազներ, անուրջներ չունին: Վերջ
Այս խաւար, միմաքող խուլ բանդում:
Ծաղիկներ, ծաղիկներ տանջանքի...
Դու հոտում ես նրանց ցնցող բոյր
Եւ կրում ես կարօտը կեանքի,
Որ անցնու անհրապոյր, անհամբոյր:

II.

Չորս բոլոր իշխում է մութ-խաւար,
Չորս կողմից ծանրութեամբ արձիճի
Չգում ես մի ճնշում անարդար:
Դառնում է սիրող ծով կսկիծի:
Բայց յաճախ ծաղկում են քեզ դէմքեր
Խաւարում՝ սիրելի ու ծանօթ,
Կուգէիր դու նրանց ողջ զրկել
Ու առնել քեզ տանջող սուրբ կարօտ:
Եւ մեկնում ես ձեռքերդ յառաջ
Խօս տեսնող զրկելու, փառութիւն:
Բայց շղթան արձակում է շառաչ—
Չգում ես սարսուղ խաբուկում...

Վ. Յովնան.

ՃՆՆԱԳՐԱՐՈՒՄԻՆ ԳՐԱՆՈՐՈՒ-
ԹՈՒՆՆԵՐ*)
Զիկմէն (Սիւր-Իարիոյ օրջաւի)

Հին քաղաքումս ապրում են
Սարթեր եւ Գիրգիլներ: Սարթերը պա-
րապում են առեւտրով եւ մասամբ հո-
ղագործութեամբ, իսկ Գիրգիլները՝
մշակութեամբ եւ հողագործութեամբ:
Ու մասնաւոր առեւտրով: Այս կող-
մերը մի առաւելութիւն ունի, եւ այդ
այն է, որ ժողովուրդը հանգիստ է եւ խա-
ղաղ: Զիկայ այն ֆանատիկութիւնն
ինչ որ պարսիկների մէջն է եւ ոչ մի տար-

*) Տես, «Միտք», № 2

բերութիւնն չեն գնում այլ ազգիի եւ իրենց
մէջ: Գործութիւն համարեա թէ չկայ:
Կալալինսկուց արդէն սկսում է սոցա
պարզ կեանքն: Ամբողջ օրն բազարում,
խանութներում ծախս են անում, իսկ
գիրքերը այն խանութները, որոնք շատ
ապրանք ունեն ցուցադրած՝ աւելորդ
աշխատանք չգործադրելու համար՝ ապ-
րանքների առաջեց քաշում են եղե-
գից գործուած շերտաներ:
Այսպէս եւ թողնում գնում են աներն,
իսկ առաւելութեամբ գալիս դարձեալ շա-
րունակում են առեւտրներն, եւ ոչ ոք
էլ ձեռք չէ տալիս: Շատերն էլ թելով
են կողպում ու գնում: Բաղաքի շրջա-
կայքն 30-50 վերստի վրայ Ռուս
գաղթականութիւններ են բնակացրել,
իսկ աւելի մօտիկ գտնւում են Գիր-
գիլի եւ Սարթի առնները (գիրգիլը),
որոնք բնակիչները եւ հողագործութե-
ամբ են պարապում: Վերջին տարի-
ներն սկսել են աւելի բամբակագոր-
ծութեամբ պարապել, բայց այնքան
մեծ քանակութեամբ չեն կարող ցա-
նել, որովհետեւ շուրջ բաւականութիւն
չի տալ ամբողջ տարածութեան համար
հողեր շրջակայքում շատ կան, վերջերս
կառավարութիւնն՝ ամենայն կերպ
աշխատում է Ռուս գաղթականութիւ-
նը շտապեցնել երկրի ապահովութեան
համար: Այնպէս որ տարեկան 20-30
գիւղ աւելանում է: Ռուսաստանի ան-
հող գիւղացիներից շատերն բնակեց-
նում են այս կողմերում: Տեղական
ժողովրդի հագուստը հասարակ է եւ
պարզ ձեւով կարում են շապիկ եւ
ոտաշոր: Եւ գլուխներին ծածկում մի
թասակ: Այդ նոցա ամառուայ հագուս-
տն է, իսկ ձմեռը վրայից հագնում
են մի չափան, որը նման է խալաթի
եւ գօթով կապում: Հարուստ եւ աղ-
քատ միևնոյն ձեւի եւ միևնոյն կտորից
են հագնում: Տօն օրերին տարբերում
են նրանով, որ բոլորն էլ գլխներն
ծածկում են չալմայով՝ սպիտակ գոյ-
նի:

(Վերջ.)

Արմենակ

ԼՈՒՐԵՐ

Թարիգ

«Թեմիս պաւլոնորդը պահուայ
ընթացքում իւրաքանչիւր կերակրւի-
լի է փոխ Դալա եւ Լիւաւա թաղերի եկե-
ղեցիներում տալու է քարոզ:

«Երբ անգամ լինելով էլի չկա-
յացաւ Դալայի պատուիրակային ընտ-
րութիւնը:

«Մարտ 2-ի գիշերը կայացաւ «Տար-
տիք» եւ «Արեւելեան Առաքելութիւն»
պիեսների ներկայացումը Արամ-
եան դպրոցի թատերասրահում: Ներ-
կայացումը յօգուտ դպրոցի՝ նախաձեռ-
նել էին դպրոցի նախկին սանուկներ-
ը՝ մասնակցութեամբ դպրոցի ման-
կավարժական խմբի: Ներկայացումն
անցաւ շատ յաջող: Կար ընտիր հասա-
րակութիւն: Տոմարներն սպառուած
էին:

«Առաջիկայում» տիկիներն Մա-
րան Նազարեցիկեանի եւ Բրիտանիէ Վար-
դանեանի նախաձեռնութեամբ եւ ու-
սուցչական խմբի մասնակցութեամբ
արուելու է թուրքերէն մի ներկայա-
ցում Արամեան դպրոցի թատերասրա-
հի համար միջոցներ չեն եղել: Նպատա-
կով:

Լիւաւի դպրոցների բարերար աշ-
րի տիկին Շաքինապարեանը տարինե-
րից ի վեր պառապում է անփողու-
թիւնից: Կայ ու կլինի մի իշխանու-
թիւն որ վերջ գնի այլու թշուառ
դրութեան:

«Մեզ յայտնեցին, որ Շոջա-Էդ-
իովէն ցրել է պարսկ. մի յայտարա-
րութիւն: որ եթէ ընտուեն ժողովրդի
խաղաղութիւնը վրդովող թերթ ու լրա-
գիրներ, ապա դրանց ստացողները
կենթարկուեն խտրադոյն պատասխա-
նատուութեան: Ասում են, որ դա հե-
տեանք է Մոլլա-Նասրէդին թերթի մի
սուր գրեւածքի:

ԱԶԳԱՅԻՆ

«Մեզ յայտնեցին, որ երբեմնի Գաշ-
նակցական մարտիկ Անդրանիկը 1000
հայ կամաւորների հետ միացած՝ մաս-
նակցելիս է եղել վերջին գործերից մէ-
կին ընդդէմ Ադրիանապոլսի Անդրա-
նիկի քաջասիրտ կռուելու համար Բոլ-
զարական թագաւոր Ֆերիդնահըն ան-
ձամբ՝ կռուի դաշտում մի շքանշան է
կախել Անդրանիկի կրծքից:

«Մեակ» № 37 եւ 39-ից

«Գերմանական դեսպանը Կ. Պոլ-
սում բացարձակ յայտնել է. «Թիւր-
քիւն» եւրոպայում այլեւ ոչինչ չունի
անելու, ն. առ ուրիշ բան չի մտած,
բացի վերջնականապէս իր փաստափո-
սէն հաւաքելուց դէպի Ասիա: Կ. Պոլի-
սը լինելու է ազատ քաղաք:

«Ծանօթանալով Գալիպոլիի գործե-
րի դրութեան հետ, Մահմուդ-Շէվքէթ
փաշան զեկուցեց Բ. Դրանը, թէ
գրութիւնը յուսահատական է: Այդ
պատճառով միևնոյնների խորհուրդը
վճռեց միաձայն շուտով հաշտութիւն
կապել:

«Մահմուդ Շէվքէթ-փաշան, լաւ
յոյսեր չը ստանալով գերմանական
դեսպանից, ներկայացաւ սուլթանին եւ
խնդրեց ընդունել իր հրաժարականը:
Սուլթանը հակիրճ պատասխան տուեց
նրան. «Ինքներդ Մ. Ա.» կօմիտետի
հետ միասին կրեցէք բովանդակ պա-
տասխանատուութիւնը բոլոր անաշո-
ղութիւնների համար մինչև վերջ»:

«Արեւիկայի պոլսի բերդապետ Շիւք-
րի-փաշան մի խորամանկութեան դի-
մեց, նա կազարեց բերդի մզկիթնե-
րում տեղաւորել քրիստոնիսներին,
իսկ եկեղեցիները՝ մահմադականնե-
րին: Այդպիսով նա յոյս ունի ազա-
տել թէ եկեղեցիները եւ թէ մզկիթ-
ները:

ՍՏԱՅՈՒՆՆԵՐ ԿՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիզից պ. Ատրպետը ուղարկել
է մեզ Շիրվանշահի երկերի ժողո-
վածուի 4-րդ հատորը բաժանորդներին
ցրելու համար:

Ովքեր բաժանորդագրական ան-
դորազրեք ունին՝ խնդրում ենք բա-
րեհաճեն ներկայացնել եւ ստանալ մե-
զանից գրքերը: Խմբ.

ԲՆՅՈՒՆԵ ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆՍԱԿԱՆ ԲՆՆԱԳՐԱԿԱՆ

ալմանախի 1913 թ. բաժանորդագրութիւ-
նը. տարեկան լոյս է տեսնում վեց գիրք
բաժանորդագիրն է արտասահմանում 5
ֆրանգ, Թաւրիզում բաժանորդագրուել
Թաթուլ Զիլինկիբեանի մօտ, Կենտրոնա-
կան վարժարան:

ՊԱՏԱՆԻ

- 1 «Կոհակ» դ. տարի 1913 թ. յունվ.
- 1, բացառիկ թիւ (125)
- 2 «Կոհակ» դ. տարի № № 1, 2, 3 4
- 3 «Ազգ» 2. տարի № 32 (291)
- 4 «Կայծ» բ. տարի № № 6 եւ 7. օր-
գան (ամսաթիւ) Հնչակեան Սօց.
Դէմ. կռու. Կ. Պոլսոյ ռէսանդական
միութեան:
- 5 «Կրօն եւ բարոյականութիւն» Է. Տօ-
լսոյի. թրգմ. Լ. Տատեան (ռու. Ա-
րամեան դպրոցի) հրատարակութիւն
Արամեան դպրոցի գ. դասարանի պ-
շակերտ-ուսնիների № 1. նոյն դպրոցի
60-ամեակի առթիւ. 1913 թիւ Թաւ-
րիզ «Փարոս» տպարան: գին. 1 դո.
- 6 «Համառօտ պատմութիւն Թաւրիզի
ԱՐԱՄԵԱՆ դպրոցի 60-ամեայ գոյու-
թեան» հրատարակութիւն Արամեան
դպրոցի 60-ամեայ յօբելեանական
յանձնախմբի կողմից Ա. Տէր Վար-
դանեան. 1913 թիւ «Փարոս» տպ.
գինն է 2 դոան:
- 7 «Ինչ է կրօնը եւ ինչ է բարոյակա-
նութիւնը» կրօնապատմական փիլիսո-
փայական գրադարան. գրքերի գրուի
1500 ամեակի եւ պապագրութեան 400
ամեակի առթիւ № 1. Դասախօսութ.
պրծֆ. Մ. Ռադէն. թրգմ. Գալուստ.
1913 թիւ
- 8 «Բազմալեզ» 1913 թ. № 1
- 9 Մնայող մնացած մի հայ պատմա-
գիր ԺԲ. զարն. Կարապետ եղբ.
Էջմիածին)

ՊՈՍՏԱՐԿ

Թարիգ—Պ. Վ. Ա.-ին, շնորհակալու-
թեամբ պտացել կըք ներկայ
Տարուայ 2-րդ բաժնիցին 14-դր-
ւանը
Պ. Վ. Ն.-ին նոյնպէս ձեգնից,
Պ. Յ. Յ.—ին նոյնպէս ձեգնից:
Սպանան—Պ. Ն. Դ.-ին, Անցեալ տար-
ուայ բաժնիցների մնացորդ 120
դոանն ստացանք: Շնորհակալու-
թիւններ:
Աստուա Պ. Ա. Բ.-ին, խնդրում ենք
փակել անցեալ տարուայ բաժնի-
գների հաշիւը եւ փութացնէք ա-
ռաքումը: Մենք տառապում ենք
թերթի հրատարակութեան պատ-
ճապով մեզ վրայ բարդուած
պարտքերից: Նոյնը խնդրում կըք
քաղաքիս եւ այլ քաղաքների մեր
բաժանորդներից ու գործակալնե-
րից, որոնց վրայ բաւական պար-
տքեր են մնացել մեր անցեալ
տարուայ բաժնիցների հաշուից,
եթէ այդ պատուիկները ժամանա-
կին ստացուեն մենք անտեղի
գժգոնութիւններ չենք լսի մեր
թերթի ակամայից ընդհատումնե-
րով լոյս տեսնելու մասին:

Խմբագիր-հրատարակիչ
Ա. Տ. Վարդանեան